ՄԵՂՐԻ գիւղից մեզ գրում են. տեղային քահանաները իրանց անվայել վարմունքով միշտ ժողովրդի մէջ գայթակղութեան եւ երկպառակութիւնների պատճառ են դառնում: Եթէ այդ գիւղը գալիս է մի օրինաւոր վարժապետ, իսկոյն քահանաները թշնամանում են նրա հետ, եւ այն աստիճան նեղացնում են, զզվեցնում են, մինչեւ վարժապետը ստիպված է լինում թողնել իր պաշտօնը, որ ասպարէզը դարձեալ տգէտ քահանաներին մնայ: Ոչ սակաւ խռովութիւն են գցում նրանք գիւղի մէջ, միանալով այս եւ այն հարստի, վաշխառուի կամ ժողովրդի արիւնը ծծող մի հարստահարիչի հետ: Այս պատճառով, երբ նրանց վրայ գանգատ է լինում հոգեւոր իշխանութեանը, միշտ պաշտպանողութիւն են գտնում իրանց նմաններից:

—

Թեմական վերատեսուչ պ. Բարխուդարեանը խնդրում է մեզ տպել հետեւեալը. «Ընթերցող հայ հասարակութեանը արդէն յայտնի է հայ լրագիրներից, որ մտադրութիւն կայ ապագայ 1881 թուականի ամառային արձակուրդին կազմել ԹԻՖԼԻՍՈՒՄ ընդհանուր ուսուցչական ժողով, որին, բացի Թիֆլիսի թեմի ուսուցիչներից, ցանկալի է որ մասնակցեն եւ միւս թեմերի ուսուցիչները: Այդ ժողովի նպատակն է մեր հոգեւոր ուսումնարանների հիմնաւոր բարեկարգութիւնը ներկայիս պահանջներին համեմատ, որ կիրագործվի այն ժամանակ, երբ որ մեր ուսումնարանները կը ստանան միօրինակութիւն, ընդունելով որոշ ուսման ծրագիրներ եւ կառավարվելով հաստատ կանոնադրութեամբ: Այսպիսի մի մեծ եւ ընդհանուր օգտին ծառայող գործ յաջողութեամբ կատարելու համար հարկաւոր է նախապատրաստութիւն, որով արդէն զբաղված են քաղաքիս մէջ երկու յանձնաժողովներ. մինը ուսումնական, որ պատրաստում է հարկաւոր ծրագիրները, միւսը տնտեսական, որ պիտի հոգայ ընդհանուր ուսուցչական ժողովի համար հարկաւոր ծախսերը: Այս ծախսերը հոգալու համար մենք չունենք ուրիշ միջոցներ, բայց հասարակութեան կամաւոր նուիրատուութիւններից, որ պիտի լինի ճիշտ արտայայտութիւն այն համակրութեան, որ նա ունի դէպի մեր ազգային ուսումնարանները, որոնց մէջ կրթվում է նոր սերունդը: Ուստի յայտնելով հասարակութեանը տնտեսական յանձնաժողովի անդամների անունները, որոնք են, պ. պ. Վահրամ Մութաֆեան, Յովհաննէս Ծովիանեանց, Պօղոս Մելիք Կարագօզեանց, Խաչատուր Քալանթարեանց, Մովսէս Թավաքեանց եւ Արտաշէս Մամիկոնեանց, խոնարհաբար խնդրում եմ այն անձանց, որոնք կը ցանկանան իրանց կամաւոր նուէրներով նպաստել ապագայ ուսուցչական ժողովի իրագործմանը, ուղարկել իրանց նուէրները կամ յիշեալ պարոններից մէկին, կամ «Մեղուի» եւ «Փորձի» պ.պ. խմբագիրներին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«ГОЛОСЪ» ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

"Голосъ" լրագրի մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից, հոկտեմբերի 26-ից: Այստեղ օրվայ հարցը կազմում են քիւրդերը, քիւրդերը և քիւրդերը: Քիւրդերով է զբաղված այժմ Թիւրքաց ամբողջ հիւանդ մամուլը, որ Եւրոպային աւելի էլ վատթար սարսափներով է սպառնում, եթէ նա ձեռք չի վերցնի Թիւրքիայից: Քիւրդերով զբաղված է ամբողջ ազգաբնակութիւնը, որի մի բաժինը՝ մահմեդականները ուրախութիւնից քունը կորցրել են, իսկ միւսը՝ քրիստոնեաները հասել են մահամերձ յուսահատութեան: Քիւրդերով են զբաղված պետութիւնների ներկայացուցիչները, որոնք դեռ ալբանական դժուարութիւնները չեն վերջացրել և պատահում են նոր անկարգութիւնների, որոնց կատարում է Փոքր-Ասիայի մէջ Թիւրքիան այն նպատակով, որ անզօր դարձնէ պետութիւնների փորձերը նրա գործերի մէջ խառնվելու մասին Ռուսաստանի և Պարսկաստանի սահմանների վրա: Իսկապէս ո՞վ ինչ գործ ունի այն անիշխանութեան հետ, որ բարոյական վնասներ է տալիս Ռուսաստանի շահերին և նիւթականապէս աղքատացնում է Պարսկաստանին:

Իսկոյն ստացված և քաղաքի մէջ արագութեամբ տարածված լուրերի համեմատ, Շէյխ-Իբադուլլահի աշխատութիւններից ոգեւորված ապստամբ քիւրդերը կազմում են 100,000 մարդ, որոնք զինւորված են Մարտինի հրացաններով և Թիւրքաց զինապահեստներից ստացված թնդանօթներով: Թամերլանի այդ գունդերը սկսեցին „լուծել քրիստոնեաների հարցը“ և աւերակ դարձնել Պարսկաստանը, որը վայելում է գեավուրների հովանաւորութիւնը այն ժամանակ, երբ Մարգարէի փոխանորդը բացարձակ պատերազմում է նրանց հետ «յանուն Աստուծոյ մարգարէի և ի պատիւ նրա վարդապետութեան“: Իսկապէս քիւրդերի յարձակմունքը Պարսկաստանի վրա շատերը նրանով են մեկնում, որ Թիւրքիան կամենում է խաբել Եւրոպային և առիթ չը տալ նրան կասկածելու, թէ Թիւրքիան մասնակից է այն արիւնհեղութեան, որ պատրաստվում է Հայաստանի համար, որովհետև թիւրքերը այնքան «ինքնուրոյն» են գործում, որ չեն խնայում մինչև անգամ իսլամի պարսկաստանցի որդկերանցը: Այսպիսով խեղճ Պարսկաստանը «իշէ մարտիրոս» է հանդիսանում միայն այն պատճառով, որ Թիւրքիայի շահերը պահանջում են այդ, և այսպիսի քաղաքականութիւն գործ են դնում եւրոպական հողի վրա:

Պարսկաստանի այստեղի ներկայացուցիչը ստացաւ իր կառավարութենից ամենադրական ապացոյցներ, որ շէյխ Իբադուլլահը միայն անունով է քիւրդերի ապստամբութեան առաջնորդ, իսկ ապստամբներին իսկապէս առաջնորդում են թիւրք օֆիցերները, որոնք քիւրդերի բուրնուսներ ունեն հագած: Թնդանօթները կառավարվում են թիւրք թնդանօթաձիգներից: Այսպիսով շէյխ Իբադուլլահը, որ իրան քիւրդ ցեղերի խալիֆ է յայտնել, սուլթանի հաւատարիմ գործակատարը և նրա կոյր գործիքն է: Եւ ամենքին յայտնի է, որ սուլթանը ցանկանում է հանգցնել Փոքր-Ասիայի մէջ քրիստոնեաների վերածագման ամենափոքր կայծերը և հիմնել այնտեղ մի ուժեղ մահմեդական կայսրութիւնը „Ղօրանի հզօր օրէնքների“ համեմատ . . . Ուրեմն Եւրոպայից երեք ամիս ժամանակամիջոց պահանջելով հայկական գործերը կարգադրելու համար, Թիւրքիան թուաբանօրէն ճիշդ հաշւեց այն ժամանակամիջոցը, որ հարկաւոր է նրան հայկական հարցը «վերջացնելու» համար և այնպէս վերջացնելու, որ այլ եւս նրա մասին չը խօսվի:

Պարսկական հետեւեալ նահանգները արդէն քիւրդերի ձեռքին են. Միանդաբ, Մարաղա, Բինաբ, Սուջբուլաղ և Ուրմիա: Այդ տեղերի մէջ քիւրդերը կարողացան կենդանի այրել մի քանի հազար կանանց և երեխաներին, որոնք ապաստանարան էին փնտրում մեչիտների մէջ: Հայաստանի մէջ կրակի և սրի զոհ են դարձած 170 գիւղեր, որոնց տեղը այժմ ածված են կանանց, օրիորդների և երեխաների այրված ոսկորները:

Տեսնելով, որ Թիւրքաց կառավարութիւնը բացարձակ անցել է աւազակների կողմը, հայ ապստամբների առաջնորդ Մարշիմօնը դիմեց ինքնավարութիւն ունեցող Զէյթունցի հայերի իշխանին հետեւեալ հրաւէրով: „Իշխան, ինչը դարերի ընթացքում արիւն թափելով պաշտպանելի մայրենի հողի վրա, մեր նախնիքները գերեզման էին մտնում այն յոյսով, որ Նախախնամութիւնը մի ժամանակ իրանց որդկերանցը այնքան ոյժ և քաջութիւն կը տայ, որ նրանք կը կարողանան վրէժխնդիր լինել իրանց անարգանքի համար և ազատել եկեղեցին պիղծերի կապանքներից: Այդ պղծեալները մեզ ասում են. „Թող ջնջվեն այս երկրից ձեր նախնիքների անունները, թող վերջանան ձեր աղօթքները:“ Ի՞նչ պէտք է պատասխանենք, իշխան, պատմութեան և Աստուծոյ դատաստանի առաջ մեր հայրերի յիշատակը ոչնչացնելու համար: Միացնենք մեր ոյժերը գոնեա պատուաւոր մահ ստանալու համար, եթէ չենք կարող ազատել մեր նախնիքների յոյսերը և ժառանգութիւնը՝ հայ ազգի անունը և կրօնը:“ Ասում են, որ այս հրաւէրը Զէյթունի մէջ ոգի կենդանացրեց ծերերին և երիտասարդներին: Ալլահը գիտէ, թէ ի՞նչ հետեւանքներ կունենան այս անկարգութիւնները: Ինչ և իցէ Եւրոպան պատասխանատու կը լինի իր խղճի առաջ նրա համար, որ ինքը շողոքորթեց վերջին, մաշված բոյծին, որի անունը Թիւրքիա է:

Ռուսաստանի հարաւային սահմանների մօտ իսլամական նոր գաղթութեան երեւալը չէյխ, խալիֆ և ֆանատիկներին գրաւող ուրիշ անուններով, մարգարէի գերեզմանի և նրա փոշիի անունով, որի հրաւիրելը, այդպիսի կոտորածը և անամօթ շարժման աշխատութիւնը, այդ բոլորը անկասկած կը ստիպէ Ռուսաստանի այստեղի ներկայացուցչին եռանդոտ և գործնական ընթացք բռնել: Եւ ճշմարիտ, բաւական է ի նկատի առնել մահմեդականի երեւակայութեան վառ լինելը, Պարսկաստանի և Թիւրքիայի սահմանների մօտ, ռուսաց երկրի մէջ բնակվող մահմեդական ամբոխի տգիտութիւնը, որ կարելի լինի գնահատել շէյխ Իբադուլլահի աշխատութեան կործանարար բարոյական ազդեցութիւնը: Իսկ Իբադուլլահը իր կամքով, կամ ուրիշի թելադրութեամբ Մեկկան կամենում է մի այնպիսի տեղ տեղափոխել, որ Երեւանից երեք օրվայ ճանապարհի հեռաւորութեամբ է գտնվում: Աւելորդ է ասել, որ այս բոլորը այնքան նշանաւոր է Ռուսաստանի շահերի համար, որ նա միւսների շարքում չի կատարի մի իգամոլի դեր, որ հարեմական բոլի վիրաւորանքին բթացած մարդու ծիծաղով է պատասխանում: Ռուսաստանի համար այժմ շատ ուշ է ընտելանալ այդպիսի դերին, մինչև անգամ եթէ այդ անհրաժեշտ լինի և պահանջէ Եւրոպայի աւատական քաղաքականութիւնը:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

—

Լոնդոնի մէջ հրատարակվող „Daily News“ լրագիրը ստացաւ հոկտեմբերի 28-ից հետեւեալ հեռագիրները քիւրդերի ապստամբութեան մասին Պարսկաստանի մէջ: Մեշեդից. Քսան հազար քիւրդեր լաւ զինւորված Մարտինի հրացաններով, շէյխ Իբադուլլահի առաջնորդութեամբ արշաւում են Թաւրիզի վրա: Այժմ քիւրդերի այդ ամբոխը գտնվում է Սուն-Մարաղայի մէջ: Նրանք ջարդեցին Սուջբուլաղի ամբողջ ազգաբնակութիւնը: Թաւրիզի կանոնաւոր զօրքերի թիւը ընդամենը 2000 է: Քաղաքը մեծ տագնապի մէջ է: Թեհրանից պարսից շահի հօրեղբօր հրամանատարութեամբ շտապով ուղարկված են 7000 օգնական զօրքեր, աւստրիացի հինգ օֆիցերներ և տասներկու թնդանօթներ: Երէկվայ հեռագիրը հաղորդում է, որ քիւրդերը շարունակ ջարդում են բնակիչներին: Քիւրդերի և պարսկական զօրքերի մէջ մի քանի աննշան կռիւներ են եղել:“ Թեհրանից. „Լուր է ստացված, որ Թիւրքահպատակ քիւրդերի շէյխ Իբադուլլահ Թիւրքիայից անցաւ Պարսկաստան օգնական զօրքերով և ամրանում է Ուրմիա: Քիւրդերի առաջին զօրաբաժինը թողեց պարսկական զօրքերին և ուղեւորվեց դէպի հարաւ, Համադանի կողմը: Այդ զօրաբաժնին հանդիպելու համար ուղեւորվեց Թեհրանի զօրաբաժինը: Քիւրդերը գրաւել են 3000-ից աւելի քառակուսի մղոն և ընդհատում են հաղորդակցութիւնները“:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Վաղարշակերտ, 10 հոկտեմ.

Այս մի շաբաթում անհագին շշնկոց մի տիրեց ի Վաղարշակերտ, հայք առանձին, առանձին խօսում են, քիւրդք եւս առանձին խորհուրդ են կազմում, թէ ինչ պիտի լինի մեր վիճակ, նաեւ ասում են միայն հայք չեն որ զինուած են մեր կրօնի դէմ, այլ ուրիշներն եւս: Քրդերէն բազմաց սարսափ տիրած է, այն ինչ, այն ինչ հայոց դիմած են, որ վտանգի միջոցին պաշտպանեն զանոնք: Ոմանք ալ խօսում եւ յայտնի անում են, թէ մեր արեան վերջին կաթիլն կը թափենք, առ այս իրենց կրօնամոլ շէյխերուն դիմած ու թելադրված են, որ եւ նոքա գիւղերն կը շրջին, կը թելադրեն, բայց ուզածնին չափ յոյս չեն գտներ սովեալ քիւրդերէն, որոնք եկած են դռնէ ի դուռ հաց մուրալու: Նախ Շէյխ-Իբադուլլահ խստիւ պատգամներ ղրկած է քրդաց ու իսլամութեան հրաւէրներ է կարդացած, որ զինուին յանուն մահմետականութեան կրօնի եւ շտապաւ առ ինքն գալ փութան, առարկելով, թէ պատերազմ բացած է պարսից դէմ ու երեք թնդանօթ գրաւած է: Նոյնպէս կը յորդորէ Պայազիտի Միւթէսարիֆ փաշան զմահմետականս, որ օգնեն յիշեալ շէյխին: Միւս կողմէ, հայերն եւս այստեղ այնտեղ դիզվում են, մին զմիւսն է գրգռում, մինն այլում է քարոզում, այլ մէկն ոմանց վախ ազդում, մի այլն ես անցեալ պատերազմին կոտորածն է մտաբերում ու խօսում, մի այլն հայոց եռանդն է զովում. ոմն ասում է, թէ Վաղարշակերտէն կրնայ եւ պատրաստ են քրդերին դէմ դնել 2000-էն աւելի անձինք. միւսն ընդհատում է նրա խօսքն, փաստաբանելով, թէ հայն կրնայ իր չորս անգամէն աւելի թշնամոյն անվեհեր դիմադրել, եթէ զէնք ունենայ, անա, ասում է նա, երբ հայն անպատրաստ է, զէնք չունի, մեծ հարուած պիտի կրէ, եթէ սուղ միջոցի մէջ չը հոգացուի:

Այս ձայնը կառավարութեան մէջ ալ տարածվում է, պաշտօնեայք ամենայն ուժով տուրք են հաւաքում, աղքատին սաստիկ զանակոծում, առհասարակ ամէն անձէ պահանջում են: Գիւղեր կան, որ դառն աղքատ են, նորանցից եւս անթերի պահանջում են: Խրիցու գիւղացւոց մէջ միայն երկու հոգի կայ հարուստ, միւսներն առանց ցանքի, բայց այս մի քանի օր է բանտի մատնված են: Կառավարութիւնն հայ պաշտօնէից երբէք խորհուրդ չը հարցնէր, այլ ուզածն կընէ, երբ խօսելու իրաւունք պահանջէ, կը պատժուի, երբ բացակայ գտնուի կը պատժուի. միայն թէ նա ժողովոյ մէջ գտնվելով, կառավարութեան ըրածը վաւերացնելու է:

Կրօնամոլ միւսլիմաններ սկսած են օրըստօրէ զըրպարտել հայոց վրայով, այս ինչ տեղ հայք զթուրքս մորթեցին, վնասեցին, չարչարեցին եւ այլն...: Առ այս սկսած են հայոց խոտի դէզերն եւ մարագներն կրակի տալ գաղտնի:

Հ**

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 հոկտեմբերի: Այսօր տպագրական օրէնքները վերաքննող մասնաժողովի առաջին նիստը կը լինի:

ՓԱՐԻԶ, 28 հոկտեմբերի: Ներված Լուիզա Միշէլի այստեղ հասնելը պատճառ եղաւ համակրական մի մեծ ցոյցի: Որովհետև պատգամաւորների ժողովը հրաժարվեց ժողովրդական կրթութեան օրինագիծը օրական միւս հարցերից առաջ քննել, մինիստրութիւնը հրաժարական տուեց: Ասում են, որ Բրիսոն կը կազմի նոր մինիստրութիւնը:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ